ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳԱՐԵԳԻՆ Բ-Ն ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Դեկտեմբերի 7-ի արհավիրքը ցնցեց աշխարհի ողջ մարդկությանը: Սակայն ցնցեց մանավանդ աշխարհի չորս ծագերում սփռված հայերի հոգին, որոնք թերես առաջին պահին իրենց ժողովրդի բախտն անիծելուց հետո անցան կազմակերպված, միահամուռ աշխատանքի՝ իրենց հնարավոր օգնությունը շուտափույթ հասցնելու հայրենաբնակ իրենց աղետյալ եղբայրներին և քույրերին:

Շատ մտահոգ էին ու տագնապած նաև Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսարանում: Բնականաբար Գարեգին Բ կաթողիկոսը պիտի շտապեր իր աչքով տեսնելու աղետի տարողությունը՝ կիսելու իր ժողովրդի վիշտը, վշտակցելու Ամենայն Հայոց Հայրապետ Վազգեն Ա Վեհափառին:

Դեկտեմբերի 15-ին Ս. Էջմիածնի Մայր Աթոռ ժամանեց Գարեգին Բ կաթողիկոսը իր ուղեկիցների հետ՝ Տ. Զարեհ եպս. Ազնավորյան և ազգային երեսփոխան, Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության Կենտրոնական Վարչության ատենապետ տիար Խաչիկ Պապիկյան:

Մայր տաճարում Նորին Սրբությանը դիմավորեց Վազգեն Ա Վեհափառ Հայրապետը և բարի գալուստ մաղթեց Գարեգին Բ կաթողիկոսին:

Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ

Մենք Ձեզ սպասում էինք առաջիկա գարնան, ուրիշ պայմանների մեջ, սակայն ճակատագիրը այնպես տնօրինեց, որ Դուք ստիպված եղաք այսքան արագ կերպով հասնել Հայաստան, Էջմիածին՝ բերելու համար մեր հավատացյալ ժողովրդին Ձեր հայրական սերը, Ձեր մխիթարության խոսքը, Ձեր քաջալերանքը ու նաև Ձեր աղոթքը մեր զոհվածների հիշատակին: Դուք եկած եք նաև, վստահ եմ, որպեսզի միասին խորհրդակցենք, մտածենք և ծրագրեր կազմենք՝ հնարավոր չափով բուժելու մեր ծանր վերքերը, գուցեև մշակենք ծրագրեր, որպեսզի մոտ ապագային վերստին շենա-

նաև մեր քանդված քաղաքներն ու գյուղերը: Անցյալ կիրակի այստեղ մատուցված ս. պատարագից և հոգեհանգստյան արարողությունից հետո ես եղա Լենինականում և տեսա այն ողբերգական վիճակը, որի մեջ գտնվում էր քարուքանդ եղած քաղաքը և մանավանդ ժողովուրդը: Շատ տպավորություններ ունեցա անշուշտ: Սակայն ուզում եմ հիշել մեկ պատկեր միայն, որ իմ հոգին ցնցեց: Քանդված Ամենափրկիչ եկեղեցու բակում հավաքված էր մեծ բազմություն: Ես խոսում էի: Ժողովրդի միջից ականջիս հասնում էին տարբեր արտահայտություններ՝ ողբի, լացի, վշտի և այլն: Այդ պահին ինձ մոտեցավ մի տղամարդ, քառասուն և ավելի տարեկան, շատ տանջված դեմքով, ձեռքս համբուրեց և ասաց. «Վեհափառ, մի քիչ մխիթարված եմ, որովհետև մեկ երեխայիս գտա»: «Էհ, լավ է, ինչպե՞ս է», ասացի: «Չէ՛, դիա՛կը գտա»: Եվ... այդպես...

Կրկին անգամ իմ շնորհակալությունը և գոհունակությունն եմ հայտնում Ձեզ, ձեր պատվիրակության անդամներին և բոլորին, ովքեր եկան մեր վիշտը կիսելու մեզ հետ:

Ապա պատասխան խոսք արտասանեց Գարեգին Բ կաթողիկոսը.

Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ

Սիրելի Վեհափառ Եղբայր, չեմ կրնար ըսել՝ ուրախությո՞ւն է ինձի համար այստեղ ժամանելս: Բայց կրնամ գեթ ըսել ի խորոց սրտի՝ փառք և գոհություն Աստուծո, որ անգամ մը ևս աճա Իր շնորհով կգտնվիմ այս սրբազան վայրին մեջ՝ Ս. Էջմիածնի սրբաշունչ այս միջավայրին մեջ, ուր այս տագնապալի, ծանր օրերուն Ձեզի հետ ըլլալս կնկատեմ մխիթարության աղբյուրներեն մեկը: Բնականորեն, այս ձևով չէ, որ պիտի գայի ես, և սակայն «խորհուրդ մարդկան, կամք Աստուծո» իսկզբ կկիրարկվի անգամ մը ևս այստեղ: Եվ այս անգամ եկած եմ հանուն մեր Կիլիկյան Սուրբ Աթոռին, հանուն միաբանության, հանուն Ազգային Կեդրոնական Վարչության և բոլոր թեմերուն, հարյուր-հազարավոր հայ եղբայրներու և քույրերու աչքերով դիտելու պատահած աղետը, սրտով զգալու այդ աղետի ծանրությունը, և Ձեզի հետ միասին նաև մեր հայրենի իշխանությանց փոխանցելու մեր ցավակցությունները և մանավանդ աղոթելու ննջեցյալներու հոգիներուն համար, անոնց ընտանիքներուն մեր ցավակցությունը հայտնելու և ըսելու, որ մեր ձեռքերը իրենց ձեռքերուն մեջն են այս տխուր պահուն, և նաև մասնավորապես վերապրողներուն համար ծրագրելու, որ մեր ժողովուրդի պատվին վայել ու արժանի վերականգնումն, վերականգնումի աշխատանքի մը լծվի ողջ հայությունը:

Վեհափառ Տեր, գիտեմ, որ Դուք, Ձեր միարան եղբայրները, ամբողջ մեր հոգևորականությունը այստեղ ավելի ծանրորեն զգացիք այս ցավը, որովհետև անձամբ ձեր աչքերով տեսաք պատահած աղետին անավոր տարողությունը: Մենք պատկերներե և թերթերե միայն իմացանք և այսօր եկած ենք նախ աղոթելու, ձեր սուգը բաժնելու, մեր լանջախաչին սուգի ժապավենը կապելու և նույն ատեն տեսնելու, լսելու, խորհրդակցելու և ծրագրելու: Մեր ժողովուրդի գերագույն ըղձանքն է, չընկնվիլ աղետեն, հաղթել աղետին ապագայի տեսիլքով, հավատքով և մեր ազգային արժանապատ-

վուրյան բարձրագույն աստիճանի գիտակցությամբ: Անավասիկ մեր զգացումները: Այս օրերուն Ձեզի հետ ըլլալը մենք կնկատենք Աստուծո շնորհք մը մեզի, և ժողովուրդին հետ ըլլալը՝ մխիթարության աղբյուր:

Երկու Հայրապետները բազմիցս խորհրդակցեցին՝ միջոցներ որոնելու օգնելու հայրենի ժողովրդին և կառավարությանը՝ կարճ ժամանակում ապաքինելու արհավիրքի խորը վերքերը և վերականգնելու Հայաստանի պաճուռն քաղաքներն ու հարյուրավոր տոհմիկ գյուղերը:

Դեկտեմբերի 17-ին Գարեգին Բ կաթողիկոսը իր շքախմբով և ուղեկցությամբ Տ. Ասողիկ եպս. Արիատակեսյանի մեկնեց ավերակված Լենինական և ավերված Սպիտակ քաղաքները ու սեփական աչքերով չափեց տարերային աղետի արհավիրքի տարողությունն ու հայ ժողովրդի տանջանքների ու տառապանքների խորությունը: Աստված օգնական լինի հայ ժողովրդին: Սակայն հայ ժողովրդին օգնության էին շտապել խորհրդային կառավարությունն ու խորհրդային ժողովուրդները, աշխարհի ժողովուրդները՝ ողջ երկրագունդը: Նորին Սրբությունը ավելի խորունկ զգաց ափյուռքահայության օգնության անհրաժեշտությունը, որ կարող է համեստ լինել աղետի մեծության դիմաց, բայց կարևոր է՝ մեկ ժողովուրդ մեկ ճակատագիր տեսլականի համար: Երկրաշարժը ցնցի թերևս նաև մեր ազգային ինքնությունը, սթափեցնի խելահեղ հակամարտությունների մրցարշավից, կանգնեցնի մի պահ՝ ետ նայելու վերջին տասնամյակների տվայտանքներին, երբ մեր ժողովրդի հոգեկան ամբողջ եռանդը վատնեցինք ներազգային հակասությունները հարթելու թե բորբոքելու վրա: Թերևս աղետը սթափեցնի՝ հարց տալու, թե ո՞ւր ենք տանում մեր ժողովրդին Հայրենիք—Սփյուռք անջրպետը խորացնելով, որ կարող է մի օր կուլ տալ մեր բոլոր ազգային երազանքներն ու իդեալները: Տա Աստված, որ սթափեցնի:

Կիրակի, դեկտեմբեր 18:

Թափորով Մայր տաճար են առաջնորդվում Ամենայն Հայոց Վազգեն Ա կաթողիկոսն ու Մեծի Տանն Կիլիկիո Գարեգին Բ կաթողիկոսը: Հոգեհանգստյան պատարագ է: Պատարագիչն է Զարեհ եպս. Ազնավորյանը:

«Հայր մեր»-ից առաջ ս. խորան են բարձրանում երկու Հայրապետները: Պահը պատմական է, խորհրդավոր: Նորին Սրբություն Վազգեն Վեհափառ Հայրապետը Մայր տաճարը բերնեբերան լցրած հավատացյալներին է դիմում հետևյալ խոսքով.

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ

Սիրելի սգակիր ժողովուրդ, այժմ պատրաստվում ենք, երկրորդ անգամ լինելով, կատարել հոգեհանգստյան արարողություն՝ աղոթելու համար մեծ երկրաշարժի զոհյալների հոգիների համար: Այսօր, սակայն, մեր աղոթքին գալիս է միացնելու իր աղոթքը Մեր հոգևոր սիրեցյալ Եղբայրը՝ Նորին Սրբություն Տ. Տ. Գարեգին Բ կաթողիկոսը Մեծի Տանն Կիլիկիո: Ինչպես ծանոթ է ձեզ, այսօր մեր սուրբ Եկեղեցու կառույցի մեջ Կիլիկյան Աթոռը երկրորդ տեղն է գրավում Էջմիածնից հետո: Մի պատմական Աթոռ, որ մեզ հիշեցնում է պատմական հայկական Կիլիկիան: Այդ Աթոռը, սակայն, Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում տեղի ունեցած ցեղասպանությունից հետո ստիպված եղավ իր հայրենի տունը թողնել և

ապաստան գտնել եղբայրական արաբական երկրի՝ Լիբանանի մեջ, ուր հաստատվեց Անթիլիասում, կենտրոնը Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության:

Մենք շատ զգացված ենք այս այցելության համար, որ կատարում է Նորին Սրբություն Գարեգին Բ կաթողիկոսը իր շքախմբով, որի մեջ են գերաշնորհ Տ. Զարեհ եպիսկոպոսը, որ այսօրվա պատարագիչն է, և իրավաբան Տիար Խաչիկ Պապիկյանը՝ Ատենապետը Կիլիկյան Աթոռի Կենտրոնական Վարչության, որ ծանոթ անձնավորություն է նաև քաղաքական իմաստով Լիբանանում, մի քանի անգամ մինիստր եղած է և անդամ է Լիբանանի պառլամենտի՝ իբրև հայ համայնքի ներկայացուցիչ:

Սիրելի սգակիր ժողովուրդ, Մեր սիրելյալ Եղբոր՝ Գարեգին Բ կաթողիկոսի այցելությունը այսօր խորհրդանշում է ոչ միայն մեր Եկեղեցու անբաժան և անբաժանելի միությունը և եղբայրական գործակցությունը, այլ նաև մեր համազգային միասնությունը՝ Սփյուռք—Հայրենիք միասնության իմաստով, մեր հայրենի կառավարության հետ միասնության իմաստով: Մանավանդ այս դժբախտության օրերին խորհրդանշական է Նորին Սրբության այցելությունը Հայաստան և Ս. Էջմիածին: Արտասահմանում էլ բազում տեսակի հայկական կազմակերպություններ, միություններ կան, ամեն մեկը իր ծրագրով, իր ուղղությամբ, իր մտածելակերպով երբեմն, որոնք միշտ չէ, որ իրար հետ հաշտ են ու համաձայն: Եվ դա բնական երևույթ է: Սակայն այս օրերին, այս դժբախտության օրերին համայն հայությունը արտասահմանում մեկ սիրտ, մեկ հոգի է, բոլոր այլ տեսակի հարցերը մեկ կողմ են դրված, և բոլորը մեր կողքին են, Հայաստանի սգակիր ժողովրդի կողքին, մեր հայրենի պետության կողքին և պատրաստ են իրենց եղբայրական օգնության ձեռքը երկարելու միասնաբար, հավաքաբար, կարևոր իրագործումներ կատարելով և հետագայում վերականգնելու համար մեր քանդված քաղաքներն ու գյուղերը, իրենց մասնակցությունը բերելով այդ հայրենասիրական, վերաշինական մեծ գործին: Արտասահմանյան հայության այս միասնությունը լավ օրինակ է նաև մեզ՝ հայաստանցիներիս համար, որպեսզի այստեղ էլ, գոնե այս պահին, ոչ մի անկարգություն տեղի չունենա, և բոլորս մեկ նպատակի շուրջ միայն համախմբվենք այս մեծ սուգի պահին: Բոլոր այն երկրորդական հարցերը, որ կարող են լինել ու կլինեն, պետք է մի կողմ դրվեն, և Հայաստանի ժողովուրդը ամբողջությամբ, առանց բացառության, մեկ սիրտ, մեկ հոգի լինի մեր հայրենի կառավարության կողքին:

Ահա այս մտածումներով և խոհերով և այս համոզումով ես ողջունում եմ ներկայությունը մեր մեջ Նորին Սրբություն Գարեգին Բ կաթողիկոսի, և հանուն Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և հայրենաբնակ մեր ժողովրդի իմ գոհունակությունը և երախտապարտությունն եմ հայտնում:

Սիրեցյալ եղբայր Մեր ի Քրիստոս, հրավիրում եմ Ձեզ, որ Ձեր մխիթարական խոսքը ուղղեք մեր սգավոր ժողովրդին:

Ապա իր պատգամն է տալիս Նորին Սրբություն Գարեգին Բ կաթողիկոսը.

ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՔԱՐՈԶԸ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

Սիրեցյալ, հավատացյալ, արյունակից ու ազգակից եղբայրներ և քույրեր, խոր գոհության զգացումով փառք կառաքեմ դեպի Աստված, դեպի երկինք, որ ինձի շնորհք բրավ, արժանի բրավ գիս Միածնաէջ այս սուրբ և սրբահաճաճ տաճարին մեջ աղոթակից դառնալու իմ ավագ և սիրեցյալ եղբոր՝ Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Վեհափառին և ձեր բոլորին, հայոց պատմության այս ամենեն նշանակալից և վճռական պահերեն մեկուն առիթով: Կհիշեմ, քսան տարիներ առաջ էր, երբ տակավին 1968-ին ոչ մեկ սպիտակ թել չէր խառնվեր իմ մորուքին, ես այդ սուրբ բեմը բարձրացա Ս. Գրիգոր Լուսավորչի տոնին և շարականագրին բառերովը ջանացի նվագել Աստուծո Հոգվույն ճնարը Գրիգոր Լուսավորչի անձին ու հավատքին մեջեն: Եվ անավասիկ այսօր կզգամ և վստահ եմ, որ դուք բոլորդ ալ կզգամ ինձի պես, թե այս բարձրացումս խարան և խոնարհումս այս սուրբ տաճարի սեղանին տարբեր բնույթ ունի, տարբեր նկարագիր, տարբեր տարողություն, որովհետև այս անգամ այս բեմին վրա կբարձրանամ որպես կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիո՝ հրավերովը և սիրովը մեր սիրեցյալ Եղբոր՝ Վազգեն Ա Վեհափառին: Եվ իմ հիշողությանս մեջ, երևակայությամբ սակայն, վերստին կյանք կառնե այս բեմին վրա քառասուներեք տարիներ առաջ բարձրացումը իմ երջանկահիշատակ նախորդներեն էջմիածնի գավակ և Մեծի Տանն Կիլիկիո պայծառիմաստ ու պայծառաշեն կաթողիկոս Գարեգին Ա Հովսեփյանին, երբ ան այստեղ, 1945-ին, ս. մեռոնը հեղույց գագաթին վրա, Վեհափառ Տեր, Ձեր երջանկահիշատակ նախորդին՝ Գևորգ Զ կաթողիկոսին: Եվ այսպես, Հայ Եկեղեցվո միությունը, ամբողջականությունը և ղորությունը անգամ մը ևս արտահայտվեցավ:

Սիրելիներ, հոգվո պարտք կզգամ այս պահուն, այս պատմական ու նվիրական պահուն, վկայելու ձեր բոլորի առջև, որ իմ երջանկահիշատակ երկու նախորդները՝ Զարեհ և Խորեն Ա կաթողիկոսները, Ս. էջմիածինը ունենալով իրենց հոգիի խորքին մեջ, Ս. էջմիածինը շաղախած ըլլալով իրենց հոգեկան միախառնության մեջ, ցանկալով ցանկացան ըլլալ այստեղ, բայց պայմաններն այնպես բերին, այնպես դասավորվեցան, որ անոնք չկարողացան ըլլալ և իրենց ուխտը կատարել մեր սրբություն սրբոց էջմիածնի մեջ: Եվ կհավատամ, հոգիս բոլոր թելերովը կհավատամ, որ այսօր անոնց հոգիները երկնքի մեջ կերջանկանան ի տես այս գեղեցիկ, այս հուսալից, այս ոգեշնչող պահուն:

Բարեկամներ, հայրենակիցներ, հավատակիցներ, ես ուրիշ ձևով պետք էր գայի Ս. էջմիածին, և պիտի գայի հառաջիկա ապրիլին՝ հրավերովը դարձյալ մեր սիրեցյալ ավագ Եղբոր՝ Վազգեն Ա Վեհափառին, պաշտոնական առաջին այցելությունս տալու, որպես Կիլիկյան Աթոռի այժմու գահակալ: Բայց պատահեցավ չպատահելիքը, այս անավոր աղետը, և իմ ոտքերս շարժեցան դեպի Ս. էջմիածին՝ որպես սգավոր կաթողիկոս՝ սգավոր կաթողիկոսին սուգը բաժնելու, անոր ցավը մեղմելու և համայնական ցավը միասնաբար տանելու համար:

Անցնող տարին՝ 1988-ը, չեմ գիտեր ապագայի պատմաբանները ինչ բառերով պիտի նկարագրեն ու պիտի բնորոշեն, բայց 1988-ը հայոց պատմության մեջ ես կրմբռնեմ որպես ամենեն ծանր և միանգամայն ամենեն որոշադրիչ, ամենեն վճռադրոշմ տարիներեն մեկը՝ թե՛ Ղարաբաղի մեր

հայության համար, թե՛ խորհրդային Հայաստանի մեր ժողովուրդին համար, թե՛ խորհրդային իշխանության կենտրոնին՝ Մոսկվայի մեջ ապրող մեր ժողովուրդին համար, թե՛ խորհրդային Միության այլ հանրապետություններու մեջ ապրող մեր ժողովուրդին համար և թե՛ Սփյուռքի մեջ ցիրուցան եղած, աշխարհով մեկ տարտղնված ողջ հայության համար, որպես նվիրականագույն և հոգեկան բարեփոխություն ստեղծելու ատակ տարի մը: 1988-ի փետրվարին մակընթացություն մը տեղի ունեցավ հայ ժողովուրդի կյանքին մեջ, հոգեկանորեն կերպարանափոխվեցավ, դայծառակերպվեցավ մեր ժողովուրդը իր ազգային ստողջ ինքնության, իր ազգային արժանապատվության բարձր հասկացողության և իր արդար իրավունքներու գիտակցությանը մեջ: Եվ ի՜նչ մարտաշարժ էր, ինչ ազգաշարժ էր, որ տեղի ունեցավ և Երևանի մեջ, և՛ ամբողջ աշխարհի չորս ծագերը, ողջ հայության ծոցին մեջ: Եվ այս բոլորը տեղի ունեցան օրինապահության, խորհրդային իշխանության կարգերու օրինավորության հարգումով, պատիվ և փառք շահեցանք ամբողջ աշխարհի մեջ, մեր այդ ստողջ գիտակցությամբը, հարգանքովը դեպի բոլոր կարգի մեր իշխանությունները՝ և՛ խորհրդային Միության մեջ, և՛ այլ երկիրներու մեջ:

Սիրելիներ, ապա անցնող ամիսներուն երկրորդ շարժ մը տեղի ունեցավ մեր ժողովուրդի կյանքին մեջ, և տասնյակ հազարներով ձեր եղբայրները և քույրերը Սումգայիթեն կամ Ադրբեջանի մյուս քաղաքներեն հարկադրվեցան, երբեմն բռնադատվեցան թողուլ տուն-տեղ և գալ իրենց երկիրը, կամ երթալ Ղարաբաղ կամ խորհրդային Միության այլ շրջանները: Եվ Մենք, երբ ընդառաջելով Մեր սիրեցյալ Եղբոր՝ Վազգեն կաթողիկոսի առաջարկին, կպատրաստվեինք Մեր ամբողջական աջակցությունը ընծայել գաղթական, իր երկրին մեջ գաղթական դարձած մեր ժողովուրդի գավակներուն, անա, ցաստանեցավ անավոր ուրիշ և երրորդ շարժ մը՝ երկրաշարժը Լենինականի, Կիրովականի, Սպիտակի, Ստեփանավանի և այլ շրջակա գյուղերուն կամ գյուղաքաղաքներուն մեջ՝ զարհուրելի քանդումներու, մարդկային զոհերու և դժբախտություններու ու ողբերգություններու տուն տալով մեր ժողովուրդի կյանքին մեջ: Ալ չէի կրնար բուղբով, հեռագրով, հեռաձայնով, բանաքով ցավ հայտնել, չէի կրնար այլևս նստիլ Անթիլիասի մեր Կաթողիկոսարանը ու երևակայությամբ տեսնել մեր ժողովուրդի այս աղետը: Անավասիկ, մեր Կաթողիկոսության ազգային կենտրոնական վարչության գործադիր մարմնի վերին իշխանության հետ համախորհուրդ, Մեր ընկերակիցներով, որոնց անունները այնքան ազնվորեն հիշեց Վազգեն Վեհափառը, եկանք Մայր Հայրենիք, եկանք Ս. Էջմիածին՝ Մեր սիրտը կապելու Մեր Եղբոր սրտին, Մեր ձեռքերը դնելու ձեր ձեռքերուն մեջ և միասնաբար, իբրև մեկ ժողովուրդ, դիմակալելու և հաղթահարելու այս աղետը, անշուշտ սգալով, ցավելով տասնյակ-տասնյակ հազարներով զոհերուն համար, բայց չընկճվելով անանց սուգի հնչումին տակ, այլ վերհառնելու կամքով վերազինված, մեր հայրերու պատմական կամքին հետևելու վճռականությամբ:

Սիրելիներ, երեկ ես գացի ու շրջագայեցա բոլոր աղետյալ վայրերը Լենինականի կամ Սպիտակի մեջ: Հավատալիք բան չէր տեսածս: Այդ անավոր ողբերգություններուն դիմաց ես աղոթք ըրի Յորը Վերքով Ս. Ասավածածին եկեղեցվո մեջ Լենինականի, և կարծեք ուրեքորդ վերք մըն էր, որ բացվեցավ իմ հոգիս մեջ, այս անգամ Լենինականի կամ հյուսիս-արևմտյան Հայաստանի վերքը, որուն դարմանումը սակայն պիտի դառնա մեր նպատակակետը և նպատակասլաց, հառաջադեմ մեր հայացքին սևեռակետը:

Ես տխուր այս տեսարաններուն դիմաց նաև տեսա ոգեպնդիչ, միխիթարական երևույթներ: Տեսա, թե ինչպես խորհրդային իշխանությունները ամբողջական կերպով լծված են աղետի դարմանումի, և՛ անմիջական, և՛ հեռակա նպատակներու համար պատրաստվելիք ծրագիրներուն: Աչքերուս տեսա, թե ինչպես ռուսական կամ խորհրդային բանակի միավորներ կօգնեն, որպեսզի մեր ժողովուրդին ցավը մեղմանա ու քանդումին ավերները կամաց-կամաց անհետին: Ես այս խորանեն շնորհակալության և հարգանքի խոսք ունիմ ուղղյալ խորհրդային իշխանության վերին մարմիններուն, ինչպես նաև մասնավորապես մեր հայրենի պետության՝ անոնց տարած աշխատանքներուն համար:

Առջի օր ես անձամբ, Վեհափառ Հայրապետին հետ միասին, այցելեցի մեր երկրի, մեր հայրենի պետության վարչապետ պարոն Սարգսյանին, և մենք երկար խորհրդակցություններ ունեցանք, որպեսզի կարենանք իմաստուն կերպով, հեռատես հայացքով, գործնապաշտ ոգիով ծրագրել մեր ժողովուրդի վերականգնումը այս ծանրագույն աղետեն:

Սիրելիներ, ես Սփյուռքեն կուգամ, արտասահմանեն կուգամ և աչքերուս տեսած եմ ու անմիջականորեն իրագեկ դարձած, թե ինչպես շղատահած երևույթ մը պատահեցավ այս առիթով ողջ աշխարհի տարածքին: Միացյալ Ազգերու Կազմակերպությունը բաղկացնող ազգերու մեծագույն մասը ինքնաբուխ կերպով սրտակցություն, աջակցությունն ի հայտ բերավ մեր ժողովուրդի նկատմամբ: Սա փառավոր վկայագիր մը, վկայաթուղթ մըն է մեր ժողովուրդի պատվին, մեր ժողովուրդի արժեքին ու մեր ժողովուրդի ապագային հաշվույն: Գիտնանք այս վկայաթուղթը, այս պատվոգիրը արժեցնել մեր կյանքով ու մեր գործով ինչպես այսօր, նաև հետագային: Աշխարհի գրեթե բոլոր Եկեղեցիները, միջազգային բարեսիրական հաստատությունները և տակավին նույնիսկ ոչ քրիստոնյա ուրիշ կրոնքներու ներկայացուցիչները ինչպիսի օրինակելի ու սքանչելի, համամարդկային, համաշխարհային միասնությամբ իրենց զորակցությունը հայտնեցին, որու նշանները դուք կտեսնեք այստեղ. հեռատեսիլի վրա ամեն օր կբացատրվի, կցուցադրվի, թե ինչպես հարյուրավոր ինքնաթիռներով օգնություն հասած է արդեն իսկ և դեռ պիտի հասնի:

Սիրելիներ, այս բոլորի շարքին մեր Ամենայն Հայոց Կաթողիկոսությունը Ս. Էջմիածինը, այնպես, ինչպես այս անգամ ես դայն տեսա, դարձեր է ոչ հոգևոր կեդրոն, այլ դարձեր է մարդասիրական ծառայության կեդրոն: Վեհարանը լեցվեր է օժանդակության նյութեղեններով, թանգարանն անգամ կարծեք թե թանգարանվեր է կյանքի ոճով՝ հանուն վաղվան կյանքին այնտեղ գտեղված կենսանյութերու, սենդեղենի, դեղորայքի հսկայական սընդուկներով: Հարգա՜նք և խորագույն շնորհակալություն, Վեհափառ, ու երախտագիտություն, որ անգամ մը ևս Ս. Էջմիածնի անունը, իբրև Ամենայն Հայոց Կաթողիկոսություն, այսքան բարձր պահեցիք և կշռունակեք պահել՝ մատաղ ընելով ձեր միաբանները, հոգևոր հեմարանի ձեր սաները այս նվիրական գործին, և Ձեր կոչերով ու հաղորդակցություններով արտասահմանի հետ՝ ստեղծելիք այն համայնական շահագրգռությունը, որուն կարիքը ունի այսօր մեր Եկեղեցին:

Սփյուռքի հայությունն ալ բարձրագույն առտիճանի, ինձի համար հայտնություն եղող աստիճանի մը ուժգնությամբ արտահայտեց իր միասնությունը այս աղետին առիթով: Քաղաք չմնաց, շրջան չմնաց, ուր հայ ուլար ու հայը ինքը չկազմակերպեր իր օգնության ու աջակցության գործը:

Սրեւակայեցէք, սիրելի եղբայրներս ու քույրերս, Լիբանանը, որ ինքը հարվածված է այսօր տասնչորս տարիներէ ի վեր, որ ինքը կարոտ է ուրիշ երկիրներու օգնության, ուրիշ գաղութներու աջակցության, վեց օրվան մէջ հինգ հարյուր հազար դպար հավաքեց՝ ի սեր մեր ժողովուրդին, որպեսզի այստեղ հայ մանուկ մը անսնունդ չմա, վիրավոր մը վերոտ չմնա, ու հայությունը իր աշխերը հասե դեպի կյանք և դեպի ապագա:

Անցնող կիրակի, նույն հոգիով, նույն զգացումներով, ինչպես Ս. Էջմիածնի մեջ մեր ժողովուրդը հավաքվեցավ Անթիլիասի Մայր տաճարին մեջ, և տասնյակ հազարավոր բազմության առաջ մենք հոգեհանգիստ կատարեցինք և մեր խոսքը ուղղեցինք մեր հավատացյալ ժողովուրդին: Այս կիրակի այստեղ ենք անա, իսկ հաջորդ կիրակի, Աստուծո կամքով, Մենք դարձյալ Անթիլիաս պիտի ըլլանք և պիտի դառնանք այս անգամ ձե՛ր բարգմանը արտասանմանի մեր ժողովուրդին առջև, մեր Հաբողիկոսության սահմաններուն մեջ: Անավասիկ, եղբայրներ, թե ինչ առիթով, ինչ պայմաններով, ինչ զգացումներով, ինչ մտորումներով, ինչ խոհերով, ինչ առաջադրություններով եկած ենք այս անգամ: Եվ թույլ տվեք ինձի այսօր, քանի առաջին անգամն է, որ, իբրև կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիո, խոսք կառնեմ այս սուրբ բեմին վրա, դառնալ և ըսել ձեզի, այս ամբողջ եղածներն ետքը, խորհնացիի բառերը փոխ սուռնելով. «Հողբամ զքեզ, Հայոց աշխարհ, հանուրց հիւսիսականաց վերնագոյնդ»: Բայց անմիջապես պիտի ընդվզիմ այդ խոսքերուն դեմ: Եղավ ժամանակ, որ Մեր երկիրը կոչվեցավ ողբի հայրենիք, վերքի հայրենիք և ապա դարձավ ու է այսօր լույսի հայրենիք, հույսի հայրենիք և պիտի մնա այդպես, եթե մենք այդպես ընենք մեր հայրենիքը:

Սիրելիներ, մենք ալ այսօր պետք է անդրադառնանք ու այս երկրի ու աղբողջ հայության մահացած, բայց անմեռ բանաստեղծին՝ Պարույր Սևակի լեզվովը ըսենք. «Հողբամ մեռելոց. կոչեմ սպրողաց»: Եվ այսօր այս բեմեն ես ալ կկոչեմ ձեզի, ըսելու համար, թե հայության կյանքին մեջ, հայության կյանքը ըմբռնելու փիլիսոփայության մեջ ընկճվիլը, հուսահատիլը տեղ չունի, մեր ժողովուրդը այս ուղետեն շատ ավելի ծանր ուղետներե անցած է: Սվքեր կհուսահատին, անոնք հայության իրենց ապրումին մեջ բերի են, երբ ոչ դավահան: Հուսահատություն և հայություն խորթ են իրարու: Մենք հույսով ենք ապրեր, հավատքով ենք ապրեր և պիտի շարունակենք ապրիլ ու այս աղետին դիմաց պիտի շրջունք, որ մեր թշնամին կամ թշնամիները մեզի դառնան և ըսեն՝ լա՛վ եղավ ձեզի, հայե՛ր: Ո՛չ: Նորեն պիտի շահինք ղատիվ՝ վերաշինելով, վերականգնելով: Հետևաբար, սիրելի եղբայրներս և քույրերս, երբ վերջ խոսք ունիմ ձեզի այսօր ըսելիք, երբ փունջ. Ինչ կուզեք, ըրեք, մեր հողը *դայիմ* բռնեցեք, ամուր կառչած մնացեք այս սուրբ հողին, հողեն ծնած ենք, հողն է Աստուծո մեծագույն պարգևը մարդուն, Աստված մարդը երկինքի կապույտեն չստեղծեց, Ասված մարդը ջուրերեն չըստեղծեց, Աստված մարդը հողեն ստեղծեց, հողն է մարդու համար կյանքի աղբյուրը: Եկեք, ուրեմն, մեր հայրենի հողը լքելու փորձութենեն հրաժարինք: Թող այս աղետը ամեն մեկուս համար ուխտի պահ մը դառնա, ուխտի, որ մենք պիտի շրջունք այս հայրենիքը, պիտի չերթանք օտար աշխարհներ: Մեր թշնամին մեզ ստիպեց, որ մենք սփյուռք դառնանք, դուք ձեր կամքով սփյուռք մի՛ դառնաք: Սփյուռքը մահվան նախադուռն է առանց հայրենիքի: Սիրելիներ, ես սփյուռքը ապրած եմ, պատասխանատվության դերով ապրած եմ և կխնդրեմ ձեզմե, որ չերևակայեք, թե ուրիշ աշխարհներու մեջ մեղր ու կարագ կա ձեզի համար ու կանաչ մարգագետիններ կան փռված ձեր առջև:

Կյանքը ամեն տեղ դժվարություններ ունի: Ես ալ գիտեմ, մոտեն հետևած եմ. ունեցած դժվարություններ այս երկրին մեջ, ունիք տակավին. բայց ըսեմ ինձ, ո՞ր երկիրն է, որ դժվարություն չունի: Կկարծեմ թե Լոս Անջելո՛սն է, որ դժվարություն չունի: Գնացողը կիմանա: Երբ մի քանի տարի հետո իր գավակներու շրջեներուն վրա Ս. Մեսրոպին լեզուն ցամքի, այն ատեն կիմանա, թե ինչ կնշանակե սփյուռք: Մի հող ունինք, մի պատվական հող ունինք, մի ապահով ու խաղաղ գետին ունինք, *դայիմ* բռնենք, ամուր բռնենք, այս հողը, թող այս ըլլա իմ սրտի վկայությունը ձեզի իբրև սփյուռքահայ կյանքի մեջ հոգևոր և ազգային պատասխանատվության կանչված մեկու մը առաջին խոսքը ս. խորանին՝ այս պահուն:

Երկրորդ, սրտի ժողովուրդ միայն մի՛ ըլլաք, այլ եղեք նաև խելքի ժողովուրդ, խելքով ապրող ժողովուրդ: Զգացումները միշտ առատ են եղած հայոց պատմության մեջ: Ատիկա գեղեցիկ երևույթ է: Ասոր համար ըսելիք չունիմ, միայն հարգանք ունիմ: Բայց հշմարտությունը այնտեղ կանգ չառներ: Զգացումով միայն ազգ մը չի կրնար ապրիլ: Ի՜նչ գեղեցիկ է, ի՜նչ խորիմաստ է հինգերորդ զարու մեր ոսկեդինիկ մատենագիր Եղիշեի խոսքը, որ կըսե. «Հոգւոյ և մարմնոյ միտք են կառավար»: Հոգիին ու մարմնին կառավարը միտքն է: Պետք է, որ մենք այս դժվար օրերուն մեջ գիտնանք իմաստությամբ, հեռատեսությամբ և լայնախոհությամբ մեր գործերը դասավորել ու չտարվիլ զգացումներով միայն: Սիրելիներ, ամեն մարդու հոգիին մեջն է Ղարաբաղը, թող ոչ ոք առանձին իրեն տերը կարծե Ղարաբաղի: Եթե մարդ իր հոգիին մեջեն դուրս բերե Ղարաբաղը, իր հոգիին աշխարհագրությունեն դուրս հանե գայն, կնշանակե, որ իր հայության մեջ անպայման կթերանա: Բայց էականը իմաստությամբ շարժիլն է, այս մեծ երկրին՝ խորհրդային Միության օրինականության չափանիշներով և սահմաններուն մեջ գործելն է, որովհետև մենք մեր պատմության մեջ միշտ տուժած ենք մեր զերզգայնությամբ: Մենք այսօր, մասնավորաբար հայկական ցեղասպանության՝ 1915 թվի եղեռնի հիսունամյակեն ու վաթսունամյակեն ետքը, երբ կպատրաստվինք յոթանասունհինգամյակին, կհավատանք, որ ազգային քաղաքական որոշ հասողության և հասունության հասած ազգ մըն ենք: Աշխարհի կարգերը մեկ օրեն մյուսը չեն փոխվիր, ժամանակ է հարկավոր, պատրաստություն է հարկավոր, և հետևաբար մեր բոլոր ղեկավարները, ըլլա Հայրենիքի մեջ, ըլլա Հայրենիքեն դուրս, իրենց գերագույնը կընեն և պիտի ընեն մեր ժողովուրդը տեսնելու համար ամբողջական և մեր ժողովուրդը ունենալու համար իր իրավունքներու արդար և ամբողջական հանգրվանին վրա: Բայց գիտցեք կարգապահությամբ շարժիլ, չտարվիլ զգացական ավելորդ խանդավառութենե: Խանդավառությունը գնահատելի է, բայց իր չափին ու ձևին մեջ՝ վնասակար երբեմն: Աշխարհի ազգերուն հետ խոսիլ գիտնանք: Եվ մենք, որ որոշ փորձառություն մը ձեռք բերինք միջազգային եկեղեցական կյանքի հարաբերությանց գծով, կըսենք ձեզի. երբ մեր հավատքը ամուր է, երբ մեր գիտակցությունը առողջ է, ձևերը կգտնվին, վստահիլ գիտցեք ձեր ղեկավարներուն, որոնց հոգիին մեջ նույն զգացումները կան: Ըսեք ինձի, եղբայրներ, անկեղծ ըլլանք այս խորանին առջև, այս նվիրական պահուն, պատարագի ընթացքին, ինչքա՜ն գեղեցիկ փոփոխություններ հառաջ եկան անցնող տարիներուն հենց մեր կյանքին մեջ, այստեղ՝ Հայաստանի մեջ: Քանի՛ եկեղեցիներ բացվեցան ու կբացվին և պիտի բացվին տակավին: Բաղդատեցեք այս օրերու կյանքը այն հին օրերուն հետ: Շատ բան փոխվեցավ: Կյանքը փոփոխություն է, հառաջդիմու-

թյուն է: Մենք այ, հայերս այ, պետք ունինք և՛ խորհրդային Միության մեջ, և՛ արտասահմանի մեջ ՊԵՐԵՍՏՐՈՅԿԱՅԻ: Հերեստրոյկան, սակայն, կյանքի իսկ փիլիսոփայությունն է, այսինքն՝ հարատև բարելավում, դեպի լավը երթալու ընթացք: Հույսը կխամրի, երբ չնորոգվի, մարմինը կփչանա, երբ չզորանա նորոգվելով, կյանքն ալ կլնանա ու կնահնանա ստանց փոփոխվելու: Բայց գիտնանք այդ բայորը իմաստնորեն, հարգանքով ու պատշանությամբ և մեր ազգի պատիվին, անունին նոր լույս բերող ձևերով գործադրել:

Վերջապես, երբ..., անհատականն ու մարդկայինը պետք է ստորադասել ընդհանրականին, ամբողջականին և մասնավորաբար այն հասարակականին, որ կպատկանի բոլորիս: Ազգի մը կյանքի հաջողության գերագույն գաղտնիքը անոր մեջ կկայանա, երբ այդ ազգը գիտնա մասնավորը ներդաշնակել ընդհանուրին հետ և ընդհանուրով արժևորել մասնավորը: Երբ մենք կոտրտված, կտոր-կտոր եղած, մասնատված ազգ ըլլանք ու մեր միությունն ու ամբողջականությունը չկարողանանք դրապես, գործնապես արտահայտել, հավատացեք, մենք գոհ կերթանք աշխարհի բոլոր տեսակ քամիներուն և փոթորիկներուն: Բայց երբ գիտնանք կողք-կողքի ըլլալ, ամուր կառչիլ իրարու և՛ իբրև Հայրենիք, և՛ իբրև Սփյուռք, այն ատեն առավել քան յոթը միլիոն հաշվող այս ազգը, վերածնած այս ազգը միշտ պիտի նայի դեպի հաղթանակ: Գիացեք, հետևաբար, ազգի գերագույն շահը գերիվեր համարել մասնակի կամ անցողակի, ժամանակավոր ու փծուն շահերեն:

Ահավասիկ, եղբայրներ և քույրեր, իմ առաջին խոսքը: Բայց ես չեմ ուզեր միայն խոսքով փակել: Այսօր ես եկա ու տեսա մեր ժողովուրդի այս անավոր ցավը, լսեցի տնավեր հայ ծնողաց ու որդեկորույս հայ հոր ու մոր հառաչանքը: Պիտի երթամ և արձագանք պիտի ըլլամ այդ բոլորին: Բայց տեսա, ինչպես ըսի, նաև մեր ժողովուրդի կամքը, վերակառուցելու կամքը: Ինձի համար ոսկի կոչված բանը ժողովուրդն է: Իմ ժողովուրդն է մեր պատմության ոսկին: Ոսկիները կուգան ու կերթան, ժողովուրդն է, որ կտևե: Եվ այսօր, այս խորանին վրա, որպեսզի ես մեկ հայ գավակի, մեկ հայ մանուկի աչքերուն արցունքը սրբեմ ու մեկ հայ ընտանիքի սեղանին վրա ուզտառ մը հաց հայթայթեմ, իբրև կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիո ընտրությանս ատեն ինձի տրված այս ոսկի արծիվը, ձեր բոլորին առջև կհանեմ ու զայն կդնեմ այս սուրբ խորանին: Թող Աստված ընդունի զայն իբրև խմոր մը ապազա նվիրահավատության: Վեհափառ, անոր ոսկին ինչ որ արժե, տվեք մեր ժողովուրդին: Եվ այս սեղանը համբուրելով կուխտեմ ձեր բոլորին առջև, որ գերագույն կարելիս պիտի ընեմ, որպեսզի ինչ որ Աստված ինձի տված է, վերադարձնեմ մեր ժողովուրդին՝ անոր վերականգնումին համար: Այս ուխտով կհամբուրեմ ս. սեղանը և կմեկնիմ մեկ-երկու օրեն դեպի Անթիլիաս:

Հետո երգչախմբի մեղմ ու հոգեպարար «Գթա, Տէր»-ով սկսվեց հոգեհանգստյան արարողությունը:

Արդարների հավիտենական հիշատակը թող օրհնյալ լինի: